GLOBAL CREDIT

N Գկ 2018/11-0269 07.11.2018թ

Հաշվետվություն 03

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝
Պարոն Արթուր Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան,

Համաձայն «ԱԶԴԱԳԻՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/04-ի գլուխ 23-ի, Ձեզ ենք ներկայացնում 2018թ. նոյեմբերի 6-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի որոշումը՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անվանական պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ:

Կից ցուցակման վերաբերյալ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի նոյեմբերի 6-ի N ՏՊ-005-11/18 որոշումը:

Հարգանքով

Գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

NASDAQ OMX

N ZOB-3-232 «07» 11 2018թ.

Տեղաբաշխող՝ **«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի**
Գործադիր տնօրեն պարոն Վ. Սարոյանին
(Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 16)
Պատճենը
Թողարկող՝ **«Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ**
Գործադիր տնօրեն տիկին Լ. Իգրարյանին
(Հասցե՝ 0054, ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 փարաժք)

Հարգելի պարոն Սարոյան,

Հարգելի տիկին Իգրարյան,

Կից Ձեզ ենք ներկայացնում «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 2018 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՏՊ-005-11/18 որոշումը՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի (GLBLB7)՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տեղաբաշխման հարթակում տեղաբաշխման թույլատրելու վերաբերյալ:

Առդիր՝ 1 (մեկ) թերթ:

Հարգանքով,

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
07 NOV 2018
Մուտք 9Մ20181111-0817

Կատարող՝ Հասմիկ Սալնազարյան
Հեռ. 54-33-24 (լր 115)

NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

6 նոյեմբերի 2018 թվականի N ՏՊ-005-11/18

ք. Երևան

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկած անվանական արժեկտրոնային պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու մասին

Հիմք ընդունելով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի նոյեմբերի 3-ի դիմումը Ընկերության 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 10% արժեկտրոնային տոկոսադրույքով 50,000 (հիսուն հազար) հատ անվանական պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Բորսայական ծառայությունների դեպարտամենտի» կողմից 2018 թվականի նոյեմբերի 6-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 10% արժեկտրոնային տոկոսադրույքով 50,000 (հիսուն հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMGLBLB27ER2 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով GLBLB7 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. նոյեմբերի 27-ին փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Տեղաբաշխողին, պատճենը՝ Թողարկողին, և որոշման մասին տեղեկությունները հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**